Հովհաննես Թումանյան

Գրականական «մազանդա»

(Նվեր իմ բարեկամ Ղ. Աղայանցին)

Այսքան երազ, որ մենք հայերս
Ընդունակ ենք տեսնելու,
Պարզ է, որ շատ սազում էր մեզ
Լավ երազգիրք կազմելու:

Եվ գրքերից՝ միշտ հայ ազգը
Երազգիրքն է շատ հարգում,
Ինչպես կազմող տեր-հոր ազդը
Ցույց է տալիս Մըշակում:

Տեր-հայրն այնտեղ ասում է, որ

Էլ չթողին երազգիրք.
Ամեն կողմից ուղարկում են
Շատ նամակներ ու խնդիրք...

Երազգիրքն է, ասում է նա,
Հայի ոսկի ընկերը...
Եվ սրանում կասկած չըկա

Փաստ է ասում տերտերը:

Երազգիրքը չի կարելի
Տալ ապառիկ ոչ մի հատ...
(Ինչ ապառիկ, երբ մի բանի
Մուշտարի կա այսքան շատ):

Դեհ, իմ անգին Ասլան-Ապեր,
Արի թողնենք ամեն ձիրք.
Էլ չըգրենք երգ ու վեպեր,
Ծինենք մի լավ երազգիրք:

Ա՞խ, եթե մենք գեթ մի-մի հատ
Երազագիրք հորինենք,
Այնուհետև գրչով ապրող
Կարգին գրող կըլինենք:

Էլ չենք ծախիլ մեր գրքերը

Ութսունուհինգ տոկոսով,
Կոպեկ կոպեկ առնիլ փողը,
Այն էլ՝ կանխիկ միայն կիսով:

Տեր-հոր նման քսան տողից
Երկար մի ազդ կըգրենք,

Մինչև նոր տիպն ընթերցողից
Համբերություն կըխնդրենք...

Եվ մեր գործից երբ կըստանանք

Այսպես առատ վարձ ու փող,
Նոր կըտպենք ավելի թանկ,

Եվ ավելի մեծ ու ճոխ:

Իսկ երբ տանենք գրախանութ,
Էլ չենք կանգնիլ լուռ ու խեղճ.
Հայի ոսկի ընկերն է սա.
Ոչ ապառիկ և ոչ զեղչ...

Ապրիս, տեր-հայր, ինչ լավ գիտես
Մեր հայ ազգի ճաշակը.
Թե չէ՝ մենակ պարծենալով
Զահլա տարավ Մըշակը:

1898